ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ապրիլի 2014 թվականի թիվ 43-Ա

ԱՆՈՒՇ ԵՍԱՅԱՆԻ ՀԵՏ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Քաղաքացիական ծառայության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի <բ> կետով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2004 թվականի մայիսի 31-ի <Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանելու մասին> N 436-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 3-րդ կետի <դ> ենթակետով և 5-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահի 2014 թվականի ապրիլի 11-ի N 07/2140-14 գրությունը՝

Որոշում եմ.

1.ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի /ծածկագիր՝ 70-3.1-11/ ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար Անուշ Եսայանի հետ 2014թ. ապրիլի 28-ից կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր, մինչև մրցույթի արդյունքով թափուր պաշտոնը զբաղեցնելը:

2.<Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին համապատասխան սահմանել դրույքաչափ՝ առաջատար պաշտոնների առաջին ենթախմբի սանդղակի և աշխատավարձի 1-ին մակարդակի գործակցի /2.52/ կիրառմամբ՝ 100.800 /հարյուր հազար ութ հարյուր / դրամ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

2014թ.ապրիլի 28
ք.Իջևան